ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴՇ-15/04

ք. Երևան «26» « հունվարի » 2015թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ **Խ.Աղաբեկյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրենի ժ/պ **Ս.Մուրադյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ»** ծրագրի՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 04 (բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների իրականացում) (այսուհետ՝ ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **137 266 900 (հարյուր երեսունյոթ միլիոն երկու հարյուր վաթսունվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2015 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (հավելված 2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Դիլիջան, Թբիլիսյան խճուղի
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Դիլիջան» մ/ճ
ՀՀ 900011007797	ՀՀ 247250000699
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 07610657
ՀՀ բնապահպանության նախարարության	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
աշխատակազմի ղեկավարի ժ/պ	տնօրենի ժ/պ
Խ.Ադամյան	**Ս.Մուրադյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 1
«26» «հունվարի» 2015թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-15/04 պայմանագրի

Պետական մարմին

ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007797
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի ժ/պ

Խ.Աղաբեկյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Կազմակերպություն

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

ք.Դիլիջան, Թբիլիսյան խճուղի
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Դիլիջան» մ/ճ

ՀՀ 247250000699
ՀՎՀՀ 07610657
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ

Ս.Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրի իրականացման

ՀՀ ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	«Դիլիջան» ԱՊ պահպանություն	1. Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բամազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն /պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում (33765 հա) 2. Մարդու գործունեության հետևանքով ազգային պարկի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում ազգային պարկի ամբողջ տարածքում (33765 հա)	Չխախտված էկոհամակարգ	Պատշաճ պահպանություն	31.12.2015թ.	**116 319 200**
2	Հակահրդեհային միջոցառումներ	1. Հակահրդեհային ճանապարհների կառուցում 2. Հակահրդեհային ճանապարհների վերանորոգում 3. Հանքայնացված շերտերի կառուցում և խնամք	Կառուցված, վերանորոգված, պահպանված ճանապարհներ և խնամված հանքայնացված շերտեր	Անհասանելի տարածքներում տրանսպորտային միջոցների մոտեցման հնարավորության ապահովում և հրդեհների բռնկման հավանականության նվազեցում	31.12.2015թ.	**1 722 900**

3	Ազգային պարկի տեղամասերում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացման միջոցառումներ	Գարնանային (2-րդ, եռամսյակ) և աշնանային (3-4-րդ եռամսյակ) հերթական վերստուգիչ ստուգումների արդյունքների ամփոփում	Ստուգումների իրականացում, ներկայացված ստուգումների արձանագրություններ	Ապօրինի հատումների բացահայտում և հաշվետվություններ	31.12.2015թ.	**1550 000**
4	Ուղեփակոցների պատրաստում և տեղադրում	Պահպանության ապահովում ազգային պարկի ամբողջ տարածքում	Պատրաստված և տեղադրված ուղեփակոցներ	Ապօրինությունների կանխարգելում	31.12.2015թ.	**960 000**
5	«Դիլիջան» ԱՊ գիտական ուսումնասիրություններ	«Դիլիջան» ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի, բնության ժառանգության ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի միջոցառումների իրականացում	Ազգային պարկի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում	Ազգային պարկի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկություններ և վերլուծություններ	31.12.2015թ.	**13 092 500**
6	«Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի ինտերնետային կայքի տվյալների թարմացում և ձևափոխում	«Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացում	Կայքում տեղադրված ինֆորմացիայի թարմացում, ռուսերեն թարգմանություն և ձևափոխում	Տեղեկացված հասարակություն	31.12.2015թ.	**200 000**
7	Էկոտուրիզմի զարգացման նպատակով ք.Դիլիջան – Պարզ լիճ էկոերթուղու բարեկարգում, տեղեկատվական և կողմնորոշիչ ցուցանակների տեղադրում:	Ռեկրեացիոն գործունեության բարելավում	Էկոերթուղու բարեկարգում, տեղեկատվական և կողմնորոշիչ ցուցանակների տեղադրում	Զբոսաշրջիկների անվտանգության ապահովում և գոհունակության բարձրացում	31.12.2015թ.	**240 000**
8	Էկոտուրիզմի զարգացման նպատակով Պարզ լիճ – Գոշավանք էկոերթուղու սկզբնահատվածում գտնվող հին խաչքարերի հատվածի բարեկարգում և մաքրում:	Ռեկրեացիոն գործունեության բարելավում	Տարածքի մաքրում և բարեկարգում	Զբոսաշրջիկների գոհունակության բարձրացում	31.12.2015թ.	**100 000**
9	Էկոտուրիզմի զարգացման նպատակով ք. Դիլիջան – Ջուխտակ վանքեր - Մատուռ էկոերթուղու միջնահատվածում գտնվող գետակի վրա փայտե կամուրջի կառուցում	Ռեկրեացիոն գործունեության բարելավում	Էկոերթուղու միջնահատվածում գտնվող գետակի վրա փայտե կամուրջի կառուցում	Զբոսաշրջիկների անվտանգության ապահովում և գոհունակության բարձրացում	31.12.2015թ.	**132 500**

10	«Դիլիջան» ԱՊ-ի տարածքում հանդիպող ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակները» բուկլետի տպագրման միջոցառումների իրականացում	«Դիլիջան» ԱՊ-ի տարածքում հանդիպող ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակները» բուկլետի տպագրման միջոցառումների իրականացում	«Դիլիջան» ԱՊ-ի տարածքում հանդիպող ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակնեի վերաբերյալ համապատասխան տեղեկությունների հավաքագրում, մշակում և բուկլետի տպագրում՝ /1000 օրինակ/	«Դիլիջան» ԱՊ-ի տարածքում հանդիպող ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակները» բուկլետի տպագրում	31.12.2015թ.	**200 000**
11	«Դիլիջան» ԱՊ-ի տարածքի էնդեմիկ բույսերը» բուկլետի տպագրում	«Դիլիջան» ԱՊ-ի տարածքի էնդեմիկ բույսերը» բուկլետի տպագրման միջոցառումների իրականացում	«Դիլիջան» ԱՊ-ի տարածքի էնդեմիկ բույսերի վերաբերյալ համապատասխան տեղեկությունների հավաքագրում, մշակում և բուկլետի տպագրում՝1000 օրինակ/	«Դիլիջան» ԱՊ-ի տարածքի էնդեմիկ բույսերի վերաբերյալ բուկլետի տպագրում	31.12.2015թ.	**200 000**
12	«Դիլիջան» ԱՊ-ի գիտական բաժնի կողմից ստեղծված հերբարիումների թարմացում և 10 նոր հերբարիումների ստեղծում, տեղադրում շրջանակներում	Հերբարիումների թարմացում և 10 նոր հերբարիումների ստրղծում, տեղադրում շրջանակներում. միջոցառումների իրականացում	10 նոր հերբարիումների ստրղծման համար անհրաժեշտ նյութերի հավաքագրում, մշակում և նախապատրաստում	Հերբարիումների թարմացում և 10 նոր հերբարիումների ստրղծում, տեղադրում շրջանակներում աշխատանքների իրականացում	31.12.2015թ.	**100 000**
13	«Դիլիջան» ԱՊ տարածքում անտառտնտեսական միջոցառումներ	1. Անտառի ցանքս 2. Անտառի տնկում 3. Անտառկուլտուրաների միանվագ խնամք 4. Անտառկուլտուրայի լրացում 5. Հողի նախապատրաստում հաջորդ տարվա համար	Անտառի խտության բարձրացում, տնկիների կպչողականության բարձր տոկոսի ապահովում և կպչողականության վերականգնում	1. Իրականացված ցանքս 2. Նորաստեղծ անտառ 3. Խնամված տնկարկ 4. Վերականգնված տնկարկ 5. Նախապատ-րաստված հող	31.12.2015թ.	**2 449 800**
ԸՆԴԱՄԵՆԸ						**137 266 900**

Հավելված № 2
«26» « հունվարի » 2015թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-15/04 պայմանագրի

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք.Դիլիջան, Թբիլիսյան խճուղի «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Դիլիջան» մ/ճ
ՀՀ [illegible]7797 Հ[illegible] 02507198	ՀՀ 247250000699 ՀՎՀՀ 07610657
ՀՀ բնա[illegible]ության ա[illegible] ժ/պ	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
[illegible]	**Ս.Մուրադյան**
([illegible])	(ստորագրություն) Կ.Տ.

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը **«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ**	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
1155	ԱԾ 05	Նկարագրություն Բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացում								
Չափորոշիչներ			I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
Քանակական		Մարդու գործունեության հետևանքով ազգային պարկի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, պարկի տարածքը, հա	33765	33765	33765	33765				
		Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի կենսաբազմազանության մոնիտորինգի անցկացում և յուրաքանչյուր եռամսյակի վերջում հաշվետվության ներկայացում, եռամսյակային հաշվետվությունների թիվը	1	2	3	4				
		Ազգային պարկի տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում; ստուգումներ քանակը		1	1	2				
		Գիտական ուսումնասիրությունների իրականացում և դրանց հիման վրա կիսամյակային հաշվետվությունների կազմում, հաշվետվությունների թիվը		1	1	2				
Որակական		Մշակված չէ								
Ժամկետայնության		Հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում				Գարնանա-յին II եռամսյակ, աշնանային III - IV եռամսյակ				
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)			X	X	X	X	22924.0	53123.0	87440.0	137266.9
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1155 Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման ծառայություններ										
Վերջնական արդյունքի նկարագրությունը Բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման արդյունքում աղքատության նվազեցում, բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում										
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ										